նախումբ մը, ինչպէս եւ յառաջացուց եռանդամ յանձնախումբ մը՝ պատրաստելու համար սկսու- տական Արարատեան կարգը, առաջին անգամ ըլ- լալով միութեան պատմութեան մէջ:

ՄԱՐԶԱԿԱՆ

Մեկնելով «Առողջ միտք, առողջ մարմնի մէջ» հանրայայտ նշանախօսքէն, ժողովը կարեւորեց մարմնամարզիկ ընձեռած բարիքները հայ երիտա- սարդութեան եւ առ այս յառաջացուց եռանդամ յանձնախումբ մը, իր կազմէն, մօտէն հետեւելու շրջաններու մարզական աշխատանքներով եւ նե- րառելու նոր մարզախօսքի. հոն ուր կարելիու- թիւնը կայ, եւ մեկտեղելու անունները մրցանիշ հաստատուեց: Հ. Մ. Ը. Մ.ական մարզիկներուն՝ պատ- մութեան համար:

Առաւել, շեշտելով համա-Հ. Մ. Ը. Մ.ական մա- կարդակի վրայ տարուած մարզական հանդիպում- ները՝ կարեւորութիւնը, որոնք մեկ կողմէն կը հա- մախմբեն գաւաթ-բաժնիկն ունեցող մտասեռուած ու- նեցող հայեր, միւս կողմէն գնահատութիւն, նոր ապ- րում եւ խանդավառութիւն կը ստեղծեն կազմա- կերպիչ շրջանի հայ բնակչութեան մօտ:

Ա) Ժողովը մտահոստատեց համահայկական մարզական խաղերուն իր մասնակցութիւնը, այն հաստատ համոզումով. որ նման հանդիպումներ կ'ամրապնդեն Սփիւր - Հայաստան գործակցու- թիւնը եւ կը սերտացնեն եղբայրական կապը նոյն ազգի միջեւ:

Բ) Միութեան մարզական աշխատանքներուն նոր թափ ու շունչ տալու նպատակով, լիագումար- րը որոշեց ընթացիկ քառամեակի կիսուն, կայացը- նել համա-Հ. Մ. Ը. Մ.ական ճրգ մարզախօսքը, որից գրելով պատերազմ, վոլիպոլ եւ լող:

Այս աշխատանքներու իրագործման համար յա- ուջացուց յատուկ յանձնախումբ մը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

Լսե՛ք եւ Վեդրոնական Վարչութեան տնտեսա- կան կացութեամբ մօտէն զբոյժող պատասխանա- տուներուն զեկոյցը, մտադրելու նպատեց, որ Կեդրո- նական Վարչութեան ընթացիկ պիտեմէն կը հաւա- սարակչուի առաւելաբար ցնեցներու գումարներով: Հետեւաբար յառաջացուց յատուկ յանձնա- խումբ մը, որպէսզի ծրագրէ Կեդրոնական Վարչու- րեան նիւթական կացութիւնը բարելաւելու միջոց- ները:

«ՄԱՐԶԻԿ»

Միութեան պաշտօնաթերթ «Մարզիկ» ամա- քերը եւս դարձաւ բնագրումի նիւթ: Ժողովը հանգամանօրէն քննարկեց «Մարզիկ»ի բովանդա- կութեան, տպագրութեան եւ ցրուումի կապուած զանազան հարցերը եւ համապատասխան որոշում- ներով առաջադրեց արդիականութեան եւ արագու- թեան մեր օրերուն, ամաքերը վերածել ժամա- նակակից շունչով Հ. Մ. Ը. Մ.ական բեմի, որ իր կո- չումին համաձայն՝ իրարու օղակ է Հ. Մ. Ը. Մ.ի շրջաններն ու մասնակիցները, ծանօթացնէ Հ. Մ. Ը. Մ.ի գործը եւ տարածէ Հ. Մ. Ը. Մ.ի խօսքը, մնա- լով միութեան կազմակերպչական արտաքին վստա- րաշայտիչը:

Ժողովը քննեց նաեւ «Մարզիկ»ի համացանցի կայք էջի ստեղծման ծրագրերը եւ որոշեց այդ ուղղութեամբ ձեռնարկել անմիջապէս քայլերու: Որոշուեցաւ նաեւ «Մարզիկ»ի խմբագրականները մեկտեղել եւ առանձին հատորով մը լոյս ընծայել:

ՀԱՄԱՅՆՑ

Համացանցը միութեան կազմակերպչական ազ- րու միջոց կապուելով, որոշուեցաւ գայն արդի- ականացնել:

Որոշուեցաւ Հ. Մ. Ը. Մ.ի Կեդրոնական Վարչու- րեան կայքէջին մէջ տեղ յատկացնել Հ. Մ. Ը. Մ.ական ձեռնարկներու, դաստիարակչական ծրա- գրիներու, երգերու, եւ այլն:

Ձեռնարկել «Մարզիկ»ի համացանցի էջը ստեղ- ձելու եւ databaseի պատրաստութեան աշխատանք- ներուն:

Ոգեգինուած նոր որոշումներով, Հ. Մ. Ը. Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը վերահաստատելով իր յանձնառութիւնը, կը հաւատայ որ պիտի ըլլայ միշտ հայ ժողովուրդի ծառայութեան առաջատար զիբերու վրայ, որպէս ազգային կառոյց եւ ազ- գային տեսլակետ ունեցող կազմակերպութիւն:

Հ. Մ. Ը. Մ.ի
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յ.Յ.Դ. ԶԱՄԱՐԵԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄՈՒՐԹԻՒՆ

ՍԻՍՈՆ ԶԱՄԱՐԵԱՆԻ ՄԱՅՈՒՄԱՆ ԳՕԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ

Մասնակցութեամբ՝ **Յ.Յ.Դ. «ԶԱՄԱՐԵԱՆ» ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄՈՒՐԹԵԱՆ**

Բանախօս՝ **ԸՆԿ. ԿԱՐՕ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ**

• **Գեղարուեստական յայտագիր** • **Տեսաերիզի ցուցադրութիւն**

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 14 Նոյեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:00ից, «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ:



Թուրքիա - Կիպրոսյան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆԸ 310 ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐ ՎԱՐԿ ԿԸ ՏՐԱՄԱԳԻԵ ՊԱՔՈՒՃԵՅՀԱՆ ՔԱՐԻՒՂԱՏԱՐԻ ԾՐԱԳԻՐԻՆ

Հակառակ այն քննադատություններուն, թէ Պաքու- ձէյհան քարիւղատարին կառուցումը կենսոլորտային լուրջ վնասներ պիտի պատճառէ, Համաշխարհային Դրամատունը Երեքաթի, 4 Նոյեմբերին որոշեց 310 միլիոն տոլարի վարկ մը տրամադրել ծրագրիին:

Գումարին 60 միլիոն տոլարը պիտի տրամադրուի կասպից ծովուն խորքը գտնուող Հանքէ մը քարիւղ արտադրելու աշխատանքներուն, իսկ 250 միլիոն տոլարը բուն քարիւղատարին կառուցման:

Բրիտանիոյ մէջ ծրագրիին դէմ բողոքի ալիք ստեղծողներուն համաձայն, 1040 մղոն երկայնք ունեցող քարիւղատար խողովակը իր հասցուցած կենսոլորտային եւ ընկերային վնասներուն կողքին նաեւ լարուածութիւն պիտի ստեղծէ շրջանին մէջ եւ յարձակումներու թիրախ պիտի դառնայ:

Քարիւղատար խողովակին կառուցման նեցուկ կը կանգնին Միացեալ Նահանգներ, որովհետեւ այդ խողովակին կառուցումով Ուաշինկթըն նուազ կարեւոր պիտի ըլլայ Մոցի քարիւղէն: Այս ծրագրերը նաեւ մեծ քանակութեամբ քարիւղ հեռու պիտի պահէ Ռուսիոյ ձեռքէն՝ տրուած ըլլալով, որ այս վերջինը ունէր այլ ծրագրի մը՝ դէպի Սե ծովու ափը գտնուող Նովորոսիսք քարիւղ խողովակ մը կառուցելու:

Անտրու Լասթիպարտըն՝ Պաքու-ձէյհան քարիւղատարի կառուցման ընդդիմադիր կողմին բանբերը, հետեւեալը ըսաւ բացայայտուած փաստաթուղթի մասին. «Այս որոշումը յստակ կը դարձնէ, թէ Համաշխարհային Դրամատան գլխաւոր նպատակն է քարիւղի ընկերութիւններուն գործը դիւրացնել: Մինչ իրաքի վերակառուցումը պատճառ կը դառնայ այլ վայրերու յատկացումը գումարներու սեղմումին, ինչն ալ պէտք է պարտադրուած ըլլանք գումարներ վճարելու կասպից ծովու շրջանին մէջ Միացեալ Նահանգներու շահերուն օգտակար դառնալու համար»:

«Համաշխարհային Դրամատունը չի նշեր, թէ քիւրտ անջատողականները թուրքիոյ մէջ վերջ տուած են միակողմանի զինադուլին. բացայայտ իրողութիւն է, որ անոնց ապագայ թիրախներէն մէկը քարիւղատար պիտի ըլլայ», կ'ըսէ ծրագրիին ընդդիմացող Նիքըլըս Հիլտեարտ, որ կ'ազդարարէ, թէ այս ներդրումը կրնայ «ծուրի եւ զոգիի վերածուել»:

Կենսոլորտի պաշտպան կազմակերպութիւններ նաեւ կը յայտնեն, թէ քարիւղատարը կ'անցնի շրջանէ մը, ուր յաճախ երկրաշարժեր եւ հողային սահանքներ տեղի կ'ունենան:

Ազրպէյճան կը յուսայ 20 տարուան ընթացքին 29 միլիար տոլար եկամուտ մը ապահովել այս ծրագրիին շնորհիւ, Թուրքիա՝ 3 միլիար, իսկ Վրաստան՝ 500 միլիոն տոլար:

ԵՐԿՈՒՒ ՔԻՒՐՏ ԶԻՆԵԱԼՆԵՐ ԵՒ ԹՈՒՐԻՔ ԶԻՆՈՒՈՐ ՄԸ ԿԸ ՍՊԱՆՆՈՒԻՆ

Թրքական զինուորական ուժերու աղբիւրներուն համաձայն, խումբ մը քիւրտ զինեալներ Չորեքաթի, 5 Նոյեմբերի գիշերը յարձակած են Պինկէօլի մօտերը գտնուող Թրքական բանակի դիրքերէն մէկուն վրայ. յարձակումին պատճառով տեղի ունեցած զինեալ ընդհարումին ընթացքին սպանուած են երկու քիւրտ զինեալներ եւ թուրք զինուոր մը, մինչ երկու այլ զինուորներ ծանրորէն վիրաւորուած են:

Քիւրտիստանի Ազատութեան եւ Ժողովրդավարութեան խորհուրդը (նախկին Քիւրտիստանի Բանուորական կուսակցութիւնը) Սեպտեմբերին յայտարարած էր, թէ վերջ պիտի տայ միակողմանի զինադուլին, որովհետեւ Անգարա մերժած էր քրտական տագնապը խաղաղ միջոցներով լուծելու բոլոր առաջարկները:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐ ԱԶՐՊԵՅՃԱՆ

Ազրպէյճանի նախագահական «ընտրութիւններէն» ետք, երկրին ներքին իրավիճակը տակաւին կը մնայ լարուած: Քաղաքական գործընթացները շիկացում կ'արձանագրեն, իսկ իշխանութիւնները քաղաքական դիրքորոշումներու եւ ընդդիմադիր կուսակցութիւններու անդամակցութեան պատճառով պաշտօնակի կ'ընեն պետական շարք մը անձնակազմութիւններ:

Այս հարցին շուրջ 6 Նոյեմբերին յայտարարութեամբ մը հանդէս եկաւ Պաքուի մէջ ԵԱՀԿի գրասենեակի ղեկավար Փիթըր Պուլարտ, որ դիտել տուաւ, թէ «խտրականութեան որեւէ փորձ անթոյլատրելի է բաց հասարակութեան եւ ժողովրդավարութեան համար պայքարող երկրի մը համար»: Ան նշեց, որ ԵԱՀԿի իշխանութիւններէն կը պահանջէ քննել բոլոր բողոքները՝ երաշխաւորելով Ազրպէյճանի սահմանադրութեան կիրարկումին հետապնդումը եւ այս հարցերուն լուծումը:

Պուլարտ շեշտեց նաեւ, թէ ԵԱՀԿ մեծ կարեւորութիւն կու տայ իր անդամ երկրներուն մէջ խտրականութեան դէմ պայքարին:

www.aztagdaily.com

ՊՈԼՍՈՅ «ՍԱՐՍԱՐԱ»Ն ԿԱՆԴԱՐԱՂԱՆԱՅ ԹՈՒՐԵՒՄՈՒՐԻԱԿԱՆ ԿԱՊԵՐՈՒ ԶԱՐԳԱՅՄԱՆ

Վերջերս, Անգարայի եւ Դամասկոսի միջեւ յարաբերութիւնները սկսած են զգալիորէն բարելաւուիլ: Հաւանական կը նկատուի, որ այս յարաբերութիւնները իրենց գագաթնակէտին հասնին Յունուար 2004ին, երբ իրականանայ Սուրիոյ նախագահ Պաշչար Ասատի Թուրքիա այցելութիւնը:

Ինչպէս ծանօթ է, Թուրքիոյ եւ Սուրիոյ միջեւ փոխադարձ այցելութիւնները սկսած են ՔԱԿի ղեկավար Ապտալա Օճալանի ձեռքարկութեան (1998ին) եւ Սուրիոյ նախկին նախագահ Հաֆէզ Ասատի յուղարկաւորութեան մասնակցելու Թուրքիոյ նախագահ Ահմէթ Նեճատէթ Սեգէրի որոշումէն (2000) ետք:

Այս տարի եւս, Թուրքիոյ եւ Սուրիոյ վարչապետները մէկտեղեցին անգամ իրարու մայրաքաղաքները այցելեցին: Արտաքին գործոց նախարարներն եւս երկու անգամ Սուրիոյ եւ Թուրքիոյ մէջ հանդիպում ունեցան:

Յարաբերութեանց ջերմացումը ամրապնդուեցաւ Սուրիոյ մէջ 1-2 Նոյեմբերին տեղի ունեցած իրաքի դրացի երկիրներու համաժողովին:

Ստեղծուած այս բարեկամութեան իբրեւ արդիւնք, Թուրքիոյ կառավարութիւնը վերջերս որոշեց ակնազդեղծել Սուրիոյ հետ սահմանին 306 քմ. տարածքը: Այս տարածքին վրայ 1957-1959 թուականներուն լարուած են աւելի քան 615 հազար ակնազդեղծումներ: Ակնազդեղծումները պիտի կատարուին Թուրքիոյ սպայակոյտի նախագահութեան հովանաւորութեամբ եւ այդ տարածքը պիտի յատկացուի հողագործութեան:

Ակնազդեղծումը կը նկատուի երկու երկիրներու միջեւ նոր շրջանի մը սկիզբը: Սակայն, ոմանք հարց կու տան, թէ ակնազդեղծումէն ետք ինչպէս պիտի ապահովուի սահմանը, իսկ փոխ վարչապետ Ապտալա Սեգէրի շեշտեց, որ այս հարցուն իբրեւ պատասխան յայտնեց, թէ այսուհետեւ ապահովութեան վերաբերելով որեւէ հարց տեղի պիտի չունենայ Սուրիոյ հետ: Իսկ թէ ակնազդեղծումի շրջանները որքա՞ն պիտի տեւէ, այս մասին Շեշէրը ըսաւ, թէ այդ մէկը կ'ախրուի ունի ակնազդեղծման համար հարկաւոր սարքերու ապահովման ընթացքին:

ԹՈՒՐԻՔԻՈՅ ՄԱՍԻՆ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ Կ'ԱՆԴՐԱԴԱՌՆԱՅ ՆԱԵՒ ԲՐՏԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՀԱՐՑԻՆ

Թուրքիոյ մասին Եւրոպական Յանձնաժողովին կողմէ Չորեքաթի, 5 Նոյեմբերին հրատարակուած տեղեկագիրին հետաքրքրական կէտերէն մէկը կ'առնչուէր քրտական անուններու հարցին:

Տեղեկագիրը կը դատապարտէ իշխանութիւններուն կողմէ քրտական անուններուն մէջ որոշ տառերու դէմ դրուած արգելքը: Եւրոպական Միութեան ընդարձակման հարցերու յանձնակատար Կիւնթըր Վերհօլցըն այս մասին յայտարարութեան մը մէջ դիտել տուաւ, թէ յանձնաժողովին փափաքն է, որ ընդունելի լուծում մը գտնուի այս հարցով:

«Յանձնաժողովին համար ողջունելի էր, որ իշխանութիւնները ազատ ձգած են քրտական անուններու գործածութիւնը, սակայն միւս կողմէ տեղեկացանք, թէ որոշ տառեր ունեցող անուններուն գործածութիւնը արգելուած է: Քրտական գրեթէ բոլոր անուններուն մէջ այս տառերը կը գործածուին: Չենք ուզեր, որ քրտական այբուբենը փոփոխութեան ենթարկուի, սակայն կը փափաքինք, որ գործնական լուծում մը գտնուի այս հարցին համար: Եթէ իշխանութիւնները փափաքին, կրնան փոքրիկ օրինակներով մը կէս օրուան ընթացքին լուծել այս հարցը: Սակայն կարգ մը շրջանակներ չեն ուզեր, որ այս հարցը լուծուի: Այդ պատճառով այս նիւթը ներառուեցաւ տեղեկագիրին մէջ», ըսաւ Վերհօլցըն:

BALTAYAN ELECTRONIC

Մ. Բալայանի
Պաշտպանական
Վաճառատն
Հեռ. : 01 / 262901

Բ. Բալայանի
Տեսք. հեռ. : 01 / 259000

ՄԻՋ ԸՆԴՀԱՆՈՒԹԵԱՆ ԴԵՍ ԸԱԼԱՍԱՆՔԸ ԿԸ ԶԱՐՈՒՆԱԿՈՒԻ ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՀԸ «ԲԱՆՏԱՒՈՐ ԱՊԱԳԱՅ» ՄԸ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՒԱՏՔ ԿԸ ՅԱՅՏՆԵ


Իլհամ Ալիեւ իբրեւ Ազրպէյճանի նոր նախագահ յաջողեց իր հօրը Հայտար Ալիեւի, եւ խոստացաւ նոյնութեամբ պահել երկրին քաղաքական ուղեգիծը: Պաշտօնի պաշտօնական ստանձնումէն ետք, Իլհամ ընդդիմադիր ղեկավարներուն հետ քաղաքական երկխօսութիւն մը սկսելու պատրաստակամութիւն յայտնեց: Սակայն, միեւնոյն փամփայնակ, հարցականներ դիմազրաւող նախադահական քուէարկութեանէն ետք շղթայագործուած ընդդիմադիր գործիչներուն հայածանքը տակաւին կը շարունակուի:

31 Հոկտեմբերին իր պաշտօնի ստանձնման խօսքին մէջ, Իլհամ մեծ դրուատիքով խօսեցաւ իր հօրը նախագահութեան շրջանին արձանագրուած անտեսական իրադրութիւններուն մասին: «Մենք պիտի զօրացնենք քու հաստատած կոթողը», ըսաւ Իլհամ՝ խօսելով Հայտար Ալիեւի ձգած աւանդին մասին: «Ես կը հաւատամ Ազրպէյճանի «Բախտաւոր Ապագային», աւելցուց Իլհամ, որ եղաւ երկրի չորրորդ նախագահը 1991ին խորհրդարանի Միութեան փլուզումէն ի վեր:

Իլհամ խոստացաւ որդեգրուած քաղաքականութիւնը պահել ինչպէս որ է՝ խոստանալով յաւելուել ներուժ տրամադրելու նուազեցնելու համար չքաղաքականութիւնն ու ընկերային կարգ մը այլ յոռի երեւոյթներ: «Վերջին շրջանին Ազրպէյճանի մէջ տիրող կայունութիւնն ու հանրային եւ քաղաքական կայունութիւնը արտօնած են մեզի, որ մեծ քայլեր առնենք ներդրումներ ներգրուելու մարզին մէջ», նշեց Ալիեւ: «Մեր բոլորին պարտականութիւնն է պահպանել եւ ամրացնել այդ կայունութիւնը, իսկ եթէ ոեւէ մէկը փորձէ, մենք դէմ կը դնենք անոր», աւելցուց նա:

Ալիեւ նշեց, թէ երկրի քարիւղի եւ ընկան կազի ճարտարաբանութեան արդիւնքները կը ծառայէ իր գէն ապահովմանը շահը: «Ծառայէ ազրպէյճանցի ժողովուրդին պէտքերուն»: Ան նաեւ նշեց, թէ «մեծ միջոցառումներ» պիտի դիմուի բարելաւելու համար երկրի ընկերային պայմանները՝ դիտել տալով, որ Ազրպէյճանի 2004ի պիւտճէին 60 տոկոսը պիտի յատկացուի ընկերային մարդի բարելաւման:

Նոր նախագահը նաեւ խոստացաւ խիստ ուղեգիծ որդեգրել զբացի Հայաստանի հետ՝ Լեւոնային Ղաբարաղի հարցին լուծման առնչութեամբ: Ան շարադրողի հարցը ներկայացուց իբրեւ Ազրպէյճանի դիմազրաւած ամէնէն փոքր խնդիրը: «Մենք երբեք հաշտ չենք ներկայի կա-



ցութեամբ», աւելցուց Ալիեւ:

Նախկին նախագահ Հայտար Ալիեւ ամիսներէ ի վեր ոչ մէկ հանրային ելոյթ ունեցած է եւ ներկայիս կը բժշկուի Քիւլմիլիտի դարմանատան մէջ: Ըստ մամուլի տեղեկութիւններու, Ալիեւ իր որդիին նախագահական պաշտօնի ստանձնման արարողութեան հետեւած է Քիւլմիլիտէն, համացանցին միջոցով:

Արարողութեանէն ետք տեղի ունեցած մամուլի ասուլիսին ընթացքին, Իլհամ Ալիեւ փափաք յայտնեց քաղաքական երկխօսութեան մէջ մտնելու քարտուղիութեան ղեկավարներուն հետ, որոնք մերժած են ընդունելու նախագահական ընտրութեանց արդիւնքները: Միջազգային դիտորդները 15 Հոկտեմբերի քուէարկութեան մէջ շատ մը թերութիւններ գտան: «Քաղաքական կուսակցութիւններուն միջեւ համարաշարունակութեան հաստատումը անհրաժեշտ է», նշեց Իլհամ Ալիեւ:

Յստակ է, սակայն, թէ որեւէ երկխօսութիւն տեղի պիտի ունենայ կառավարութեան դրած օրէնքներով: Պաշտօնատարները մեղադրած են ընդդիմութեան գործիչները, յատկապէս «Մուսաւթ» կուսակցութեան պատկանողները՝ յետընտրական շրջանին խլրտումներ ստեղծելու փորձերուն յանցանքով: Հոկտեմբերի կէսերէն ի վեր, պաշտօնատարներ ճնշումի ենթարկուած են «Մուսաւթ»ի հետեւորդները՝ ձեռքարկելով հարկաւորները: Ըստ շարք մը տեղեկութիւններու, աւելի քան հարիւր անձեր դուրս դրուած են իրենց գործերէն՝ ընդդիմադիր կուսակցութիւններուն նկատմամբ իրենց քաղաքական հակումներուն համար:

Սակայն, հակառակ քուէարկութեան ընթացքին կառավարութեան կողմէ կատարուած խորհրդարանական ընտրութիւնները կ'արձանագրուին: «Նախագահներ կու գան եւ կ'երթան, սակայն փայլուն ապագան տակաւին կը մնայ միթա՞մ մը» կը նշուի յօդուածին մէջ:

«ԵՆՈՒՐԵՅԹԻԱՆԵԹ» ԿԱՅՔ

«ԱԶԳԱԿ»Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագնոր խմբագրատունը՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման քուսակցութեան առնչութեամբ մը առաջ, Մինչեւ երեկոյան 5:00:

ՄԱՀԱՋՐՆԵՐԸ բացառութիւն են: Մահազդ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր. այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

ՀԱՅԱՔՆԱԿ ՆՈՐ ԳԻՒՂԵՐ ԵՒ ԴՊՐՈՑՆԵՐ ԲԻԹԱՆԻՈՅ ՄԷՉ - ՀԱՅԱՊԱՏԿԱՆ ԸՈՂԵՐՈՒ ԲՈՆԱԳՐԱԻՈՒՄՆԵՐ



Բիթանիոյ մէջ հայկական գաղթականական նոր հասանքներ ծայր առին ԺԹ. դարու կէսէն ետք. կազմուեցան նոր գիւղեր եւ բացուեցան նորանոր դպրոցներ: 1877 - 1878ի ռուս-թրքական պատերազմէն ետք մեծ թիւով կովկասցի իսլամ դաղթականներ Նիկոմիդիոյ շրջանը հաստատուեցան, գրաւեցին հայապատկան հողեր եւ հարցեր ունեցան հայերուն հետ:

նարկեցին եկեղեցւոյ կառուցման, զոր աւարտեցին 1884ին: 1891ին եկեղեցւոյ շրջան փակին մէջ բացուեցաւ դպրոց:

Եղիշէ Չալըզեան, որ անգաւակէր, իր հարստութիւնը եւ կալուածները կտակեց համայնքին, որ այսպէսով դարձաւ ինքնաբերական:

վարժարանները սկսան բազմանալ 1860ական տարիներէն, եւ գրեթէ բոլոր գիւղերն ալ դպրոցներ ունեցան: Հիմնուեցան նաեւ բողոքական միսիոնարական եւ ամերիկեան վարժարաններ:

Մինչեւ ԺԹ. դարու կէսերը արդէն հիմնուած էին Նիկոմիդիոյ Լուսաւորչեան, Գալիանեան, Պարտիզակի Ներսէս Շուշանեան երկուսն Ազգային վարժարանները (1820ին), Ատաբազարի Ռուբինեան-Հոխսիմեան Ազգային վարժարանը՝ 1830ին, Թամլըզի Տատեան վարժարանը՝ 1845ին, Արսլանպէկի Մամիկոնեան վարժարանը՝ 1847ին, իսկ աւետարանական առաջին վարժարանը հիմնուած էր 1860ին, Նիկոմիդիոյ մէջ:

Պարտիզակի մէջ 1884ին հիմնուեցան Հայ Կաթողիկէ Միթիթարեան վարժարանը եւ Միթիթարեան աղջկանց մայրապետանոցը: Միթիթարեաններ 1889ին վարժարան բացին նաեւ Նիկոմիդիոյ մէջ:

Աղջկանց յատուկ դպրոցներ էին՝ Ատաբազարի Բարձրագոյն վարժարանը (Հայ Աթուլ), հիմնուած՝ 1885ին, Պարտիզակի գերմանական որբանոցը եւ Նիկոմիդիոյ քոյրերու վարժարանը:

Աւետարանական վարժարաններ բացուեցան Պարտիզակի, Օվաճըզի, Ատաբազարի եւ Նոր Գիւղի մէջ: յիշենք նաեւ Պարտիզակի Ամերիկեան Հայ Աթուլը, հիմնուած՝ 1876ին, եւ «Ֆէյվըր Պոյ Զոմ» (Favre boy's home), հիմնուած՝ 1897ին:

Ազգային վարժարաններէն յիշենք Օվաճըզի վարդանեան, Արմաշի Նարեկեան, իսկակալի Արսէնեան, Ատաբազարի Ազգային Կեդրոնական, Արամեան-Գալիանեան, Ներսէսեան-Սանդրոպեան, Մեսրոպեան, Նուրեան, էլ մէկի Արամեան, Ազհիսարի Ներսէսեան-Սանդրոպեան, Գնճըլարի Արշարունեան, Շագ-Շագի Արամեան-Արմենուհեան, Քարցիի Մեսրոպեան-Շուշանեան վարժարանները եւ այլն:

ՀԱՅԱՊԱՏԿԱՆ ԸՈՂԵՐՈՒ ԲՈՆԱԳՐԱԻՈՒՄՆԵՐ

Ռուս-թրքական 1877 - 1878ի պատերազմէն ետք կովկասէն իսլամ լեռնական ցեղեր՝ չերքէզներ, չեչեններ, լեզգիներ, տաղստանցիներ, ապազներ եւ այլն, «անհաւատ» ռուսին տիրապետութեան տակ չմնալու համար հարիւր հազարներով ձգեցին իրենց օրրանը եւ մտան թուրքիա: Անոնցմէ շատեր իզմիթի սանճաքին մէջ բնակեցուցան: Այդ եւ յաջորդող տարիներուն իզմիթի շրջանին մէջ հաստատուեցան նաեւ պոչնազ (պոսնիացի), ռումելիցի (եւրոպական թուրքիայէն) եւ լազ գաղթականներ:


Նորահաստատ գաղթականները, զուրկ ապրուստի կանոնաւոր միջոցներէ, իրենց գոյութիւնը պահպանելու համար սկսան յափշտակութեամբ ու կողոպուտով ապրիլ կառավարութիւնը հրաման տուաւ անոնց ազատօրէն կողոպտելու եւ սպաննելու հայերը եւ գրաւելու անոնց հողերը:

Այս պայմաններուն տակ ծայր առաւ ժողովուրդի ինքնապաշտպանութեան հարցը: Չենկիլիքի, Եալովլալի, Արսլանպէկի, Պարտիզակի եւ այլ գիւղերու մէջ կազմուեցան ինքնապաշտպանութեան խումբեր. երիտասարդները զինուեցան եւ սկսան զինավարժութեան: Մուհամմեդեան ժողովրդական արգելաւանդ մտնել գիւղերու սահմաններէն ներս. ծայր առին կռիւներ, փոխադարձ սպանութիւններ եւ վրիժառութեան դէպքեր:

Գաղթականները, պետութեան օժանդակութեամբ, սկսան գրաւել հայապատկան հողեր, արտեր, այգիներ, մրգաստաններ, արտավայրեր:



Բիթանիոյ շրջանին մէջ հայկական թեմա, սկսան գրաւել հայապատկան հողեր, արտեր, այգիներ, մրգաստաններ, արտավայրեր:



րբ, անտառներ ու մացառուտներ, որոնք օրինական փաստաթուղթերով, կալուածներով, թափուներով ու ֆերմաներով կը պատկանէին գիւղական համայնքներուն կամ ընտանիքներուն:

Չերքէզներ 1878ին գրաւեցին Երուսաղէմի վանքին պատկանող Եալովլա գիւղին շուրջ հարաւարտավար հողամասը, իսկ Չենկիլիքէն՝ 1500 արտավար հողամաս մը: Նոյն տարին տաղստանցիներ Չենկիլիքէն գրաւեցին 5200 արտավար հող: Արսլանպէկի ասուի գործարանին տնօրէնը՝ Իւրֆէթ բէկ 1878ին գրաւեց գործարանին մօտակալ Չալըքը (մացառուտ)՝ հինգ հազար արտավար տարածութեամբ, որ գիւղին սեփականութիւնն էր եւ կը ծառայէր իրբեւ վառելիքի անտառ: Արսլանպէկից օրինական կալուածագիր ունենալով դատարան դիմեցին, բայց կառավարութիւնը անվաւեր յայտարարեց գայն, առակելով, որ այնտեղ անտառին տարածութիւնը 500 արտավար արձանագրուած է, մինչդեռ բուն տարածութիւնը հինգ հազար արտավար է:

Ապագաներ 1880ին Ֆերիզի գիւղէն գրաւեցին երկու հազար արտավար հող, իսկ Ֆրնտըղը գիւղէն, փոմաքներու (իսլամացած պուլկարներ) հետ միասին՝ շուրջ հազար արտավար հող: Իզմիթիցի Հալիլ էֆենտի 1885ին Տաղ գիւղէն գրաւեց 150 արտավար հող: Պոչնազներ 1886ին Մերտեկէօզէն գրաւեցին հազար արտավար հող:

Երուսաղէմ (թափառաշրջիկ անասնաբուծ թուրքեր) 1888ին Քերամէթ գիւղէն գրաւեցին հարիւրաւոր արտավար հող: Պոչնազներ երկրորդ անգամ ըլլալով 1889ին Մերտեկէօզէն գրաւեցին հազար արտավար հող: Ռումելիցի թուրքեր



քեր 1892ին Գլըճ գիւղէն գրաւեցին հինգ հազար արտավար հող:

Լազեր 1890ին Պարտիզակէն գրաւեցին աւելի քան յիսուս հազար արտավար հայկական հողամասեր, իսկ 1896ին, Գնճըլարէն՝ հազար արտավար հողամաս մը:

Ռումելիցի թուրքեր եւ ապագաներ 1896ին Ատաբազարի մօտակալ Հոլիւ գիւղէն գրաւեցին երեք հարիւր արտավար հող: Մուլթան Համիտի սիւահատար Մուսթաֆա աղա 1898ին Եալաբուէրէն գրաւեց շուրջ հազար արտավար հող:

Պոչնազներ 1900ին Քերամէթէն գրաւեցին հարիւրաւոր արտավար հող: Մեծ Նոր Գիւղէն նոյն տարին գրաւուեցաւ հազարաւոր արտավար հող: Թահսին բէկ Քարցի գիւղէն գրաւեց վեց հարիւր արտավար հող, որմէ ետք տաղստանցի գաղթականներ 1901 - 1902ին նոյն գիւղէն գրաւեցին հազար արտավար հող եւ ամբողջ լեռներ:

Ռումելիցի գաղթականներ 1901ին Շագ-Շագ գիւղէն գրաւեցին 800 արտավար հող եւ Գարակէօզեան ապարակը՝ 500 արտավար տարածութեամբ: Քերամէթ գիւղէն 1902ին անոնք գրաւեցին երկու հարիւր արտավար հող, իսկակալ գիւղէն՝ աւելի քան հինգ հազար արտավար հող, իսկ Չուրուր գիւղէն. 1903ին՝ յիսուս արտավար հող. պոչնազ գաղթականներ եւս Չուրուրէն գրաւեցին երկու հարիւր արտավար հող:

ԱՍՊԵՏ ՄԱՆՃԻԿԵԱՆ

ՀԱՅԵՐՈՒ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԷՇՄԷ

էլ մէ գիւղ մըն է Կէյվէի մօտակայքը, Միջագիւղի լեռան լանջին, որուն առջեւ փռուած է Կէյվէի լայնատարած դաշտը: Միջագիւղէն իսլամաւոր Տօնիկեան իր ընտանիքով 1866ին հոն դնաց հաստատուեցաւ, որուն հետեւեցան ուրիշներ: Էլ մէ իր յարաբերարքը մեղմ կլիմայով շեքմապահութեան համար աւելի յարմարութիւն ունէր քան ցուրտ կլիմայով Միջագիւղը:

Գաղթի ալիքին դէմ դնելու համար Միջագիւղի երեւելիները փորձեցին արգելք հանդիսանալ. ծայր առին կռիւներ՝ գաղթի կողմնակիցներուն եւ անոր ընդդիմացողներուն միջեւ: Նիկոմիդիոյ առաջնորդ Աղաւնի եպիսկոպոս թրքական

իշխանութեան հետ համախորհուրդ միջամտեց եւ փորձեց արգիլել գաղթը, բայց ապարդիւն: Այսպէսով քանի մը տարուան մէջ էլ մէ շէնցաւ, բարգաւաճեցաւ եւ անոր բնակչութեան թիւը հասաւ 180 ընտանիքի: Էլ մեցիք գիւղի հրապարակին վրայ փայտաշէն շէնք կառուցեցին, որ թէ՛ իրբեւ եկեղեցի եւ թէ՛ իրբեւ դպրոց սկսաւ ծառայել:

ՆՈՐ ԳԻՒՂԻ ՀԻՄՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նոր Գիւղ Սապանճալի մօտակայքը, անկէ հարաւ, Սոլուֆախ լեռան լանջին, հիմնուած է 1874 Նոյեմբերին, երբ Գուրուպէլէնէն եօթը ընտանիքներ՝ 33 հոգի գացին հոն եւ անտառներ հատելով մաքրեցին հողը, փայտեայ խրճիթներ կառուցեցին եւ սկսան երկրագործութեամբ զբաղիլ: Յաջորդ տարին Գնճըլարէն երկու ընտանիքներ միացան անոնց: Իսկ 1879ին դարձեալ գնճըլարցի եօթը ընտանիքներ գացին հաստատուեցան հոն, եւ այսպէսով տասնվեց տուն բնակչութեամբ գուտ հայաբնակ գիւղ կազմաւորուեցաւ:

Գնճըլարցի եօթը ընտանիքները տակաւին նոր հաստատուած, նոյն տարին՝ 1879ին այնպիսի սղութիւն տիրեց, որ Պարտիզակի բողոքական միսիոնարութիւնը եւ իզմիթի կառավարութիւնը օժանդակութեան հասան գիւղացիներուն եւ փրկեցին գանոնք սովի սպառնալիքէն:

ԴՊՐՈՑՆԵՐ


Բիթանիոյ շրջանին մէջ հայկական

ՀԱՅԵՐ ԱԳՂԻՍԱՐԻ ՄԷՉ

Ազհիսար գիւղ մըն է Կէյվէի լայնատարած դաշտերուն մէջ, Սաքարիա գետի արեւմտեան՝ ձախ ափին, Պարտիզակի լեռներուն ստորոտը, Գուրուպէլէնի անմիջական հարաւը, Կէյվէն 13 քիլոմետր արեւմուտք եւ Նիկիայէն 44 քիլոմետր հիւսիս-արեւելք:

Գուրուպէլէն գիւղէն պայտար մը՝ Եղիշէ Չալըզեան 1860ին դնաց հաստատուեցաւ գուտ թրքարնակ Ազհիսարի մէջ: Այդ ժամանակ Ազհիսարի մէջ պայտար չըլլալով ան փնտռուած արհեստաւոր դարձաւ եւ արագօրէն հարստացաւ տուն շինեց, շերամատուն հիմնեց, յետոյ

ջաղացք բացաւ, արտեր գնեց եւ Պալապան օղլուներուն ամբողջ կալուածները ձեռք ձգեց: Պալապան օղլուներու նախահայր Պալապան օղլուն հռչակաւոր տերէպէլի մըն էր, որ ԺԸ. դարու վերջաւորութեան եւ ԺԹ. դարուն սկիզբը կ'իշխէր Կէյվէի հովիտին վրայ: Պալապան օղլուները ընդարձակ կալուածներ եւ կիսափուրջ դարձած դղեակ մը ունէին Ազհիսարի մէջ. Նշենք, որ ներկայիս ալ Պալապան օղլու ազգանունը կրող ընտանիքներ կան: Եղիշէ Չալըզեանի զարմիկները, իրենց հօրեղբորորդուոյն յաջորդութիւնները տեսնելով



Գուրուպէլէնէն գացին հաստատուեցան Ազհիսարի մէջ: Շրջակայ գիւղերէն եւս քանի մը ընտանիքներ՝ Պետիկեան գերդաստանէն Յովհաննէս, Մկրտիչ եւ Աթանաս, եւ Հաճի Ղազարեան ու Տօնիկեան ընտանիքները հաստատուեցան հոն, եւ մինչեւ 1874 հայութեան թիւը հասաւ քսան ընտանիքի:

Ազհիսար հաստատուած հայերը 1881ին ձեռ-

3ԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Հովանաւորութեամբ
ԳԵՐՁ. Տ. ԳԵՂԱՍ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ
(Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմի)
ՀՈԳԵՒՈՐ
ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ
Հինգշաբթի, 13 Նոյեմբեր 2003, Երեկոյեան ժամը 6:00ին, Ս. Նշան Մայր Եկեղեցւոյ մէջ:
Դասախօս
ԸՈԳՁ. Տ. ՊԱՐԹԵՒ ՎՐԴ. ԿԻԼԻԿՍԵԱՆ
Նիւթ
«ԵԿԵՂԵՑԻՈՅ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ. ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԴՐՈՇՄ»
Սիրով կը հրատարակուի մեր հաւատացեալները:
ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ

ՕՐԱՏԵՏՐ

ՀԱՄԱՆՄԵՐՈՒՄ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՄ / ԵՐԳ

ՕՓԵՐԱՆԵՐԸ ԳԾՈՂ ԱՐՈՒԵՍԱԳԷՏԻ ՄԸ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԸ



Նորպեթո Մարթինի «Պոհեմ» գեղանկարը ներշնչուած է Փուլչինիի համանուն օփերային եւ իբրեւ թատերաբեմ ընտրած է փարիզեան Սոնմարթըրը եւ Զարթի Լաթեն թաղամասերը:

Գեղարուեստի երկու մարպետու միաձուլումը եղող հետաքրքրական ցուցահանդէս մըն է իտալացի գեղանկարիչ Նորպեթո Մարթինիի «Թէաթր է օփերայն», որ 7-28 Նոյեմբերին տեղի կ'ունենայ «Այտա Շերֆան» արուեստի ցուցասրահին մէջ:

Արուեստի երկու ճիւղերու՝ օփերայի եւ գեղանկարչութեան նուիրուած Նորպեթո Մարթինիի միաձուլումը կը մատուցէ երգեցողութեան եւ նկարչական արուեստները՝ մեծադիր իւղաներկ պատանդներու վրայ փոխադրելով նշանաւոր օփերաներէն ներշնչուած պատկերներ: Օփերայի այս պարիթոնը գեղանկարչութեան ասպարէզը մուտք գործած է իբրեւ ինքնուարուեստագէտ՝ երփներանգելով երաժշտականութեամբ եւ ներդաշնակութեամբ յարաբերուած յայտնարուեստագէտները:

«Թէաթր է օփերայն» խորագրեայ իւղանկարներու հաւաքածոն կը յարմարեցնէ Նորպեթո Մարթինիի կը վերարտադրէ Մոցարթի, Վերտիի, Փուլչինիի եւ Պելլիիի օփերաներուն տեսարանները՝ անոնց տալով գունազեղ աշխուժութեան նոր պարունակ մը: Արուեստագէտին գեղանկարները կը թողուն բեմադրարուեստի տպաւորութիւն եւ առաւելագոյն չափով կը փոխանցեն տուեալ օփերային մթնոլորտը: Ընդհանրապէս տպաւորապէս աշխուժ պարոցին հետեւող գեղանկարները կը յատկանշուին խոյսագեցած գեղանկարչոյն ներուէն եւ ձեւերու համադրութեամբ, ինչպէս նաեւ՝ կերպարներուն շարժումներով: Նորպեթո Մարթինիի գեղանկարներուն իբրեւ թատերաբեմ կը ծառայեն տուեալ օփերային միջավայրը հանդիսացող քաղաքին յատկանշական թաղերը, յուշարձանները եւ տաճարները:

«Թէաթր է օփերայն» ցուցահանդէսը կարելի է այցելել առաւօտեան ժամը 11:00էն մինչեւ երեկոյեան ժամը 8:00:

ԱՅՍՕՐ

- Վաւերագրական ժապաւեկներու փառատօն՝ «Տորիտեյզ», «Մետիկե» թատերասրահ, ժամը 18:30էն սկսեալ, մինչեւ 13 Նոյեմբեր:
- Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ «20րդ դարու հայ գեղանկարիչներ», «Նոսա՛գ Արք» ցուցասրահ, մինչեւ 21 Նոյեմբեր:
- Նկարչական ցուցահանդէս՝ «Մասք է գ'ուա-գո», Ֆատիա Հատտատի գործերը, «Ալիս Մոդապապ» ցուցասրահ, մինչեւ 29 Նոյեմբեր:
- Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ «Պի-Ռուբ», «Կեօթե» հիմնարկ, մինչեւ 19 Նոյեմբեր:
- Նկարչական ցուցահանդէս՝ «Քալըր եուր մայնտ», Ժուլիանա Սեյրալիի գործերը, «Եսփաս Էս. Տե.» ցուցասրահ, մինչեւ 15 Նոյեմբեր:
- Ջետեղման արուեստի ցուցահանդէս՝ «Ըբրոս Քանթիլընթ», Ժիւլիանա Մարթիի գործերը, «Ֆընել» ցուցասրահ, մինչեւ 23 Նոյեմբեր:

ՕՂԵՐԵՒՈՅԹ

ՉՈՐԷԲՇԱԲԹ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ 2003
 ՊԵՏՐՈՒԹ ԱՆՁՐԵՒՈՏ
 ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ ՑԵՐԵՎ՝ 20°C
 ԳԻՇԵՐ՝ 15°C
 ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 67%

ԱԶԳԱԿ 50 ՏՄԵՐԻ ԱՅՈՒՄ
 12 Նոյեմբեր 1953

ՀԱՅՈՒ ՄԸ ՆՈՒԻԵՐԸ ԶՕՐ. ՆԵԿԻՊԻՆ

Գահիրէի «Մարթոն» ընկերութեան պաշտօնեաներէն Յովհաննէս Սրապեան երկարամիտներու աշխատանքով շինած է «Ռիֆայի» մզկիթին «մաքեթ» երկաթով ու պղինձով, եւ զայն նուիրած է Հանրապետութեան նախագահին:

Զօր. Նեկիպի՝ սրբաբարեգութեամբ զիմեյլ ետք այս գեղեցիկ գործը, տրամադրած է Յեղափոխութեան թանգարանին:

Եգիպտական թերթերը հրատարակած են նկարը եւ գեղանկարը եւ ինչպէս յիշատակ իր պատկերը եւ գեղանկարը եւ ինչպէս յիշատակ իր պատկերը եւ գեղանկարը:

ԱՅՍՕՐ՝ 12 ՆՈՅԵՄԲԵՐԻՆ
 1968. Մահ արդարաւատոյց Սիսաք Թորաքեանի:



bezdig_mezdig@hotmail.com

ՍԱԿԱՐԱՆ

Պէտք ունի սակարանին մէջ օտար դրամանշնորհու փակման սակագինները հետեւեալներն էին երկու Սուրիական թղթուկի 28,75 - 28,95 լ.ն. Բուլղարական տիւար 5110,00 - 5135,00 լ.ն. Յորդանանեան տիւար 2121,00 - 2131,00 լ.ն. Պահրէյնեան տիւար 3985,00 - 4010,00 լ.ն. Ա.Մ. Էմիրութեանց տիրիալ 410,75 - 412,75 լ.ն. Քաթարեան ուիալ 413,75 - 415,75 լ.ն. Սէուտական ուիալ 402,00 - 404,00 լ.ն. Օմանեան ուիալ 3895,00 - 3920,00 լ.ն. Եգիպտական կիւնէ 220,00 - 230,00 լ.ն. Անգլիական սթըրլին 2510,00 - 2520,00 լ.ն. Չուիցերիական ֆրանք 1105,00 - 1110,00 լ.ն. Թրքական լիրա 100,75 - 101,25 լ.ն. Կիպրական փաունտ 2960,00 - 2985,00 լ.ն. Ճապոնական հապար եհն 13,75 - 13,85 լ.ն. Ամերիկեան տոլար 1501,00 - 1515,00 լ.ն. Քանադական տոլար 1145,00 - 1150,00 լ.ն. Աւստրալիական տոլար 1073,00 - 1078,00 լ.ն. Եւրօ 1733,00 - 1743,00 լ.ն.

● **ՈՍԿԻ**
 Անգլիական մէկ ոսկի 149,000 - 154,000 լ.ն.
 Իրանեան մէկ ոսկի 134,500 - 139,500 լ.ն.
 Օսմանեան մէկ ոսկի 124,500 - 129,500 լ.ն.
 Մեքսիքական փետսու 715,000 - 735,000 լ.ն.
 Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի 18,650,000 - 18,850,000 լ.ն.
 Մէկ օնս ոսկի 387,000 - 387,50 լ.ն.
 Մէկ օնս արծաթ 5,06 - 5,08 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.
 Եւրօ 1.1495 - 1.1500
 Քանադական տոլար 1.3121 - 1.3126
 Ռուսիական ֆրանք 1.3640 - 1.3645
 Ճապոնական եեկ 108.66 - 108,71
 Մէկ սթըրլին 1.6665 - 1.6669

● **ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱՇՆԵԹՈՒՂԹԵՐ**
 ԳԻՃԻ Ա. ԵՂՈՒՄ ԳԻՃԻ Բ. ԵՂՈՒՄ
 Ա. կարգ 4,20 4,19
 Բ. կարգ 4,30 4,30

ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852

«ՎԱՆԱՅ ՉԱՅՆ»Ի ԱՅՍՕՐՈՒՄՆ ԶԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

8:30. Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
 8:45. «Աստղեր»
 9:00. «Ռատիօ - Թատրոն»։ կը ներկայացնեն Մարի Ռոզ Մանուկեան եւ Մանուկ Մարգարեան
 9:40. «Առաւօտեան տոն»
 9:45. «Աստղիկ»։ կնոջական յայտագիր.
 11:30. Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն
 1:30. Հայաստանեան լուրեր
 3:00. Արաբերէն յայտագիր.
 հարցազրոյց լոնտոնեան լրագրող Սամի Հաժի հետ. կ'արձարծ համացանցին ընդմէջէն արաբական դատին նկատմամբ մտնեցումներու եւ յօդուածներու վերաբերեալ ճիշդեր
 4:45. «Բարի երեկոյ Վանայ Չայնէն»։ ուղղակի ձայնասփոխում՝ այլազան եւ հետաքրքրական ճիշդեր, երգեր, հարցազրոյց եւ այլն: Այսօրուան հիւրն է սրնգահար Թամար Իսկենեան

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Ս. Նշան Մայր եկեղեցոյ անուանակոչութեան առիթով, փոխան մատաղցու ոչխարի եղած են հետեւեալ նուիրատուութիւնները.

● Պորճ Համուտի Զաղաքապետարան 1,000,000 լ.ն., տըր եւ տիկին Կրէկուար Ագար 225,000 լ.ն., տըր եւ տիկին Նշան Համամեան 225,000 լ.ն., Թախթաճեան ընտանիք 150 \$, Պայթարեան ընտանիք 150 \$, տըր եւ տիկին Յարութիւն Ծահպազեան 200 \$, տըր եւ տիկին Կարպիս Շէքերեան 200 \$, տըր եւ տիկին Վարդան Նահարեան 100 \$, տըր եւ տիկին Սուրէն Խանամիրեան 225,000 լ.ն., Ազգային մը 150 \$, տըր եւ տիկին Տիգրան Միհասեան 100 \$, տըր եւ տիկին Միշէլ Զէյնունեան 100 \$, փոքրիկ Նշան Կորիզեան 150,000 լ.ն., տըր եւ տիկին Կարօ Սապունճեան 100 \$, Ազգային մը 100 \$, Զաւէն Մարրիեան 100,000 լ.ն., տըր եւ տիկին Գրիգոր Վահրատեան 50 \$, տըր եւ տիկին Կարօ Վահրատեան 50 \$, ԼՕԻԻ «Մեղրի» մասնաճիւղ 50,000 լ.ն., տիկին Էօժենի Սանտրիկ 100 \$, տիկին Ծաղիկ Արտիշեան 20,000 լ.ն., «Մեցա» Համագործակցական վարչութիւն 225,000 լ.ն., տըր եւ տիկին Զաւէն Պոյաճեան 225,000 լ.ն.:

● Շաքէ Թորոսեանի մահուան քառասունցիկ առիթով՝ Ս. Նշան Մայր եկեղեցոյ Տիկնանց Միութեան եղած է հետեւեալ նուիրատուութիւնը.
 Օրիորդներ Անահիտ եւ Աստղիկ Փափագեան 50,000 լ.ն.

● Շաքէ Թորոսեանի մահուան քառասունցիկ առիթով՝ Ս. Նշան Մայր եկեղեցոյ եղած են հետեւեալ նուիրատուութիւնները.
 Տըր եւ տիկին Գեորգ Մահլէպճեան 10 \$, տըր եւ տիկին Մեջրն Թորոսեան 25,000 լ.ն., տըր եւ տիկին Յարութիւն Զեօւեան 20,000 լ.ն., Գարամանուկեան ընտանիք 20,000 լ.ն., տըր եւ տիկին Սուրէն Անթոնեան 25,000 լ.ն., տըր եւ տիկին Արա եւ Թագուհի Թորոսեան 50,000 լ.ն., տըր եւ տիկին Ռազմիկ եւ Մարալ Ոսկերիջեան 25,000 լ.ն., Եգիկ եւ Նորա Տէվէճեան 25,000 լ.ն.:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5589 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱՋԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10
1									
2									
3									
4									
5									
6									
7									
8									
9									
10									




ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ	ՈՒՂԱՆԱՅԵՍ
1. Թովղութիւն - Յոփ, խառնազնաց:	1. Հայոց կաթողիկոս՝ Աստուածատուր Ա.:
2. Արաբական օտար անուն - Լեզով մը՝ այո՛:	2. Խոկալ - Ուղուկ:
3. Մեծ մայր - Իգական օտար անուն:	3. Պողոստու - Մառատեան:
4. Անուան հակիթ հայ-թայթող - Մանրաբար:	4. Այրուբենէն - Գիւղաքաղաք (հակ.) - Չայնանիշ:
5. Շարունակ, յարատեւ:	5. Փոխանակ - Բեռնաբարձ մեքենայ:
6. Սպիտակահեր - Մեկնում:	6. Ուրուագիր, ստուերագիր:
7. Տապալի, արեւելեան իւղ:	7. Խաղողի կուտ - Ստացական ածական:
8. Գինիի ոգի - Տապան, չիբիմ:	8. Չամիչոտ կարկանդակ - Ջրասէր թռչուն:
9. Կրկնուած ձայնաւորներ - Որոշուած գին - Հայրապետական գաւազան:	9. Կնոջ ամուսնոյն քրոջ ամուսնինը - Լիբանանի գետերէն:
10. Մայթ - Ոչխարներ:	10. Առարկայ - Մեկան:

ԹԻՒ 5588
ԽԱՉԲԱՌԻՆ
ԼՈՒԾՈՒՄԸ

1	Կ	Ս	Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ
2	Ո	Լ	Ո	Ք	Լ	Ա	Ս	Ս	Ա	Ս
3	Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ
4	Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ
5	Ր	Ա	Կ	Պ	Լ	Ա	Պ	Ր		
6	Մ	Վ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ
7	Հ	Ա	Ց	Ն	Ո	Ի	Ի	Ր	Ա	Կ
8	Ա	Ե	Ս	Ա	Ք	Ա	Ն	Ի		
9	Ր	Ց	Ա	Ն	Կ	Ա	Մ	Ի	Հ	
10	Ա	Ց	Ե	Ր	Ա	Լ	Ն	Ա	Կ	
11	Կ	Ի	Ք	Ս	Ի	Ի	Ն	Ա	Կ	

Մ Ա Ր Ջ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՐՀ



Հ. Մ. Ը. Մ. Ի ՆՈՐ ՄԱՐԶԻՉԸ ՀԱՍԱԲ ՊԵՅՐՈՒԹ

ԱՅՍՕՐ՝ Հ. Մ. Ը. Մ. - ՆԸԺՄԷ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ

Այսօր, կեսօրից ետք ժամը 2:15ին, Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ Հ. Մ. Ը. Մ. Ի ֆուտբոլի ներկայացուցչական խումբը բարեկամական մրցում մը կը կատարէ Նրժմէի դէմ:

Նշենք, որ Հ. Մ. Ը. Մ. Ի նոր մարզիչը՝ ուրբանացի Ժոզեֆ Պեցա արդէն իսկ հասած է Պէյրուս եւ միացած խումբին: Ան այսօր պարպապէս պիտի հետեւի մրցումին, ապա պաշտօնապէս պիտի ստանձնէ իր պաշտօնը:

ՓԻՆԿ ՓՈՆԿ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ԲԱԺԱԿ

Հ. Մ. Ը. Մ. ԱԿԱՆ ՄԱՐԶԻԿՆԵՐ ԿԸ ՏՊԱՒՈՐԵՆ

Մինչեւ 21 տարեկաններու «անկախութեան բաժակ» մրցաշարքին Հ. Մ. Ը. Մ. ակաճ մարզիկներ արձանագրեցին յաւ արդիւնքներ:

11ամեայ Աւօ Մունջօղլեան իր առաջին մրցումին 3-2 արդիւնքով պարտութեան մատնեց Նըուլյա Սաիտը, երկրորդ մրցումին 3-0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց Ռամի Շըէյրի վրայ եւ քառորդ աւարտականին տեղի տուաւ Անթոնի Չասարուրի դէմ:

Սերուժ Չամիչեան, իր կարգին, 3-0 արդիւնքով յաջորդաբար տապալեց Նիկար Հաուատը եւ Ժոզեֆ Չասարուրը, իսկ քառորդ աւարտականին տեղի տուաւ Ժան Փիէռի դիմաց:

Հրայր Պօղոսեան 3-0 արդիւնքով տապալեց Նէպիլ Պուսթանին, ապա պարտուեցաւ Ալֆրէտ Նաժմէն:

ԱՅՍՕՐ՝ ԱՂԶԿԱՆՑ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

Այսօր, երեկոյեան ժամը 7:00ին Մոն Լա Սալի մէջ տեղի կ'ունենան աղջկանց մրցումները: Այս ժիրէն ներս Դուին Մունջօղլեան պիտի ձակատի Մարուա Ալիի դէմ:

ԹԵՆԻՍ. ԱՂԶԿԱՆՑ «ԱՍՍԹՈՐԶ»

ՔԻՍ ՔԼԻՍԹՈՐԶ ՏԻՐԱՅԱԲ ՏԻՏՂՈՍԻՆ



Քիսթըրը կը սօճէ

Յաջորդաբար երկրորդ տարին ըլլալով Քիսթըրը կ'աւելցնուի «Ասսթըր»-ի ակումբին: Աւարտականին ան 6-2, 6-0 արդիւնքով շահեցաւ պարտութեան մատնեց Ամէլի Մորեսան, որ օր մը առաջ մրցաշարքէն դուրս ձգած էր Ժիւսթին Էնէն-Արտէնը:

Իր յաղթանակին համար Քիսթըրը ստացաւ մէկ միլիոն տոլարի նիւթական մրցանակ, ապա այս յաղթանակը բաւարար չէր որ ան պահէ աշխարհի դասաւորման պարագլուխի դիրքը: Արդարեւ, Ժիւսթին Էնէն-Արտէնն է որ տարեշրջանը աւարտեց առաջին դիրքի վրայ:

ԱՅՍՕՐ՝ ԼԻԲԱՆԱՆ - ՅՈՐԴԱՆԱՆ



Պէյրուսի Քաղաքապետարանի դաշտին վրայ այսօր երեկոյեան ժամը 8:30ին Լիբանանի ֆուտբոլի հաւաքականը պիտի մրցի Յորդանանի դէմ:

Ասիոյ պիտիւնութեան վտուճի մրցումներու ժիրէն ներս տեղի ունեցող այս ձակատումը վճռորոշ պիտի ըլլայ Լիբանանի համար, որ Յորդանանի մէջ տեղի ունեցած երթի մրցումին 1-0 արդիւնքով պարտուած էր հիւրընկալ կազմին:

Երէկ երեկոյեան Լիբանանի հաւաքականը փորձեր կատարեց Պէյրուսի Քաղաքապետարանի դաշտին վրայ:

Նշենք, որ այսօրուան մրցումին համար թրիպիւնները կը բացուին ժամը 5:30ին: Կիներու եւ 12էն վար փոքրերու համար դաշտ մուտքը ձեր է:


ԹԵՆԻՍ. ԱՍՍԹՈՐԶ

ԱՅՍՕՐ՝ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ - ՖԵՏԵՐԷՐ

Տղոց «Մասթըրզ» մրցաշարքի ժիրէն ներս այսօր թի 8 դասուած արձանագրեցին Դաւիթ Նալպանտեան պիտի մրցի թի 3 Ռոժէ Ֆետերերի (Չուիցերիա) դէմ:

Ֆետերեր իր առաջին մրցումին 6-7, 6-3, 7-6 արդիւնքով պարտութեան մատնեց Անտրէ Ակասին, որ երկու «մաշ փոյնք» կորսնցուցած էր: Ան առաջին անգամ ըլլալով էր պարտութեան կը մատնէր Ակասին:

Նալպանտեան, իր կարգին 6-3, 6-1 արդիւնքով պարտութեան մատնած էր թի 2 դասուած Ֆերրերոն, ընդամենը 67 վայրկեանի մէջ:



Ֆետերեր տապալեց Ակասին

Մտորեւ առաջին մրցումը կ'աւարտուի այսօրուան յայտագիրը:

● **ԿԱՊՈՅՏ ԽՄԲԱԿ**

Ռոժէ Ֆետերեր (Չուիցերիա) - Դաւիթ Նալպանտեան (Արժանթին) Պէյրուսի ժամանակացոյցով երեկոյեան ժամը 9:00ին: Անտրէ Ակասի (Մ. Նախուան Քարլոս հանգնէր) առաւօտ-Ֆերրերո (Սպանիա) - Էան ժամը 3:00ին:

ՖՈՒԹՊՈՒ

9 ՖՐԱՆՍԱՑԻՆԵՐ ԵՒ 9 ԻՏԱԼԱՑԻՆԵՐ «ՈՍԿԵԱՅ ԳՆԴԱԿ»Ի ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒՆ ՇԱՐՔԻՆ

«Ֆրանս Ֆուտբոլ» րեբրը ընկերաց 50 րեկնածուներ «Ոսկեայ գնդակ» փոփոխին, որ կը շնորհուի րեբրին կողմէ՝ Եւրոպայի յաւաքոյն ֆուտբոլիստները: Թեկնածուներու ցանկին մէջ ընդգրկուած են 9 իտալացիներ, 9 ֆրանսացիներ, 5 որպագիցիներ եւ 4 անգլիացիներ:

Եւրոպայի յաւաքոյն ֆուտբոլիստը որպի ընկերու յաւաքիկայ ամիս: Ընկերութեան որպի մասնակցին յաւաքոյնը՝ աշխարհի փարքեր կողմերէն:

ԺԻՒՍԹԻՆ - ԷՆԷՆ ԱՐՏԷՆ՝ ԱՇԽԱՐՀԻ ԹԻԻ 1

Պելճիքացի Ժիւսթին - Էնէն Արտէն տարին աւարտեց միջազգային դասաւորման պարագլուխի դիրքին վրայ, վերջին շաբթուան ընթացքին կէտերով գերապանցելով իր հայրենակիցը՝ Քիսթըրը:


Ամէլի Մորեսան, որ հասած էր «Մասթըրզ»-ի աւարտականին, ճոր դիրքէն 4րդ դիրքը ոստում մը կատարեց.

Մտորեւ դասաւորումը.

	ԿԷՏ
1.- Ժիւսթին Էնէն - Արտէն (Պելճիքա)	6628
2.- Քիսթըրը (Պելճիքա)	6553
3.- Սերենս Ուիլիամս (Մ. Նահանգներ)	3916
4.- Ամէլի Մորեսան (Ֆրանսա)	3194
5.- Լինդսէյ Տեվլընփորթ (Մ. Նահանգներ)	2990
6.- Ճենիֆըր Քափրիաթի (Մ. Նահանգներ)	2766
7.- Անասթասիա Միսքինա (Ռուսիա)	2581
8.- Էլէնա Տեմենիշեա (Ռուսիա)	2383
9.- Չանգա Ռուպին (Մ. Նահանգներ)	2328
10.- Այ Սուկիյամա (Ճափոն)	2235


ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ԼԷՅՔՐՈԶ ՊԱՐՏՈՒԵՑԱԻ, ՍԱՆ ԱՆԹՈՆԻՕ՝ ՅԱՂԹԵՑ



Զարլ ՄալոնԳ՝ Գեղի մատնուած

ԷՆ. ՊԻ. ԷՅ.ի երէկուան մրցումներուն Սան Անթոնիո 87-78 արդիւնքով պարտութեան մատնեց Եուրթա Ճէյլը, մինչ Լոս Անճելըս Լէյքըրզ կրեց եղանակի իր երկրորդ պարտութիւնը եւ այդ՝ Մեմֆիսի դէմ:



Թիմ Տանքըն

Մտորեւ արդիւնքները եւ դասաւորումը.

Քիլվինտ - Նի Եորթ	94 - 80
Սան Անթոնիո - Եուրթա	87 - 78
Մեմֆիս - Լէյքըրզ	105 - 95
Տենսի - Շիքալո	105 - 97
Ֆեօնիքս - Կոլտըն Սթէյթ	99 - 96

ՍՐԵԲԵԼԵՆ ՇՐՉԱՆ (Ատլանտեան գօտի)

	ՅՂԹ.	ՊԱՐՏ.
Ուաշինկթըն Ուիլյարս	3	3
Պոսթըն Սելթիքս	3	3
Նիւ Ճըրզի Նէթց	3	4
Ֆիլադելֆիա Սիքսըրզ	3	4
Նիւ Եորթ Նիքս	2	5
Օրլանտո Մէճիք	1	6
Մայնէի Հիթ	0	6

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՕՏԻ

Ինտիանա Փէյսըրզ	6	1
Տիւրքիք Փիսթընզ	5	1
Նիւ Օրլինս	5	2
Թորոնթօ Ռեփթըրզ	4	2
Միլուաքի Պաքս	4	3
Շիքալո Պուլզ	3	5
Աթլանթա Հոքս	2	5
Քիլվինտ Քաւալիքս	2	5

ՍՐԵԲՄՏԵՆ ՇՐՉԱՆ

(Միջարեւմտեան գօտի)

Հիւսթըն Ռոքեթց	4	1
Միլուաքս Վուլվզ	4	3
Տալաս Մալլըրիքս	4	3
Եուրթա Ճէյլ	4	3
Սան Անթոնիո Սիքըրզ	4	4
Տենսի Նակթըց 4 4		
Մեմֆիս Կրիկիզ 3 4		

(Խաղաղական գօտի)

Սիէթլ Սուփըրսոնիքս	3	1
Լոս Անճելըս Լէյքըրզ	5	2
Ֆեօնիքս Սանս	3	3
Կոլտըն Սթէյթ Ուորիքըրզ	3	3
Փորթլենտ Թրէյն Պիլքըրզ	3	3
Սաքրամենթօ Քիւկզ	3	3
Լոս Անճելըս Քիլիքըրզ	1	2

